

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-  
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ**

*Ալավերդյան Ն.Ա. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)*

[nalaverdyan@ysu.am](mailto:nalaverdyan@ysu.am)

Հոդվածը սոցիալական նոր իրականության և վերափոխվող արժեքների դերի մասին է, որը արդիական է ոչ միայն փիլիսոփայական և հոգեբանական, այլև քաղաքական, բարոյական տեսանկյուններից և առանցքային տեղ է զբաղեցնում մարդկանց վարքաձևերում և մտակեցվածքում: Այդ պատճառով էլ ժամանակակից հասարակության արժեքների նորովի իմաստավորումը դարձել է սոցիալական կյանքի արդիականացման կարևոր պայման:

Հետազոտության նպատակը սոցիալական նոր իրականության և վերափոխվող արժեքների սոցիալ-փիլիսոփայական և հոգեբանական վերլուծությունն է, դրանց շարժառիթների և մեխանիզմների ձևավորման հիմնախնդիրները, որոնց օգնությամբ իրականացվում է սոցիալական համակարգերի անխափան գործառությունը:

Համակարգվել և համակողմանիորեն վերլուծվել են սոցիալական նոր իրականության վերափոխվող արժեքները: Առաջադրվել է այն միտքը, որ կտրուկ փոփոխությունները իրենց հետ բերում են ոչ միայն հասարակության վերակառուցման, նոր սոցիալական ինստիտուտների ներմուծման և գործառության անհրաժեշտություն, այլև հասարակության մշակութային, սոցիալ-հոգեբանական հենքի համարժեք փոփոխությունների անհրաժեշտություն:

Բազմաթիվ հարցադրումների և դրանց տրված լուծումների շնորհիվ որոշակիորեն հաղթահարվել են առաջ քաշված խնդիրները, մյուս կողմից ցույց է տրվել ժամանակակից մարտահրավերները կենսունակ դարձնելու հիմնախնդիրները:

Յուրաքանչյուր հասարակության կյանքի մշակույթը սոցիոմշակութային արժեքների այն համակարգն է, որի օգնությամբ մարդիկ սոցիալիզացվում և ձևավորում են աշխարհի նկատմամբ իրենց վերաբերմունքը: Այդ պատճառով էլ անհրաժեշտություն է առաջանում տվյալ հասարակության արժեքների վերափոխման, նորմերի ու արժեքների վերարտադրության և դրանց շարժառիթների ու մեխանիզմների վերափոխման, որոնք էլ նպաստում են փոխակերպվող հասարակության սոցիոմշակութային վիճակը և գործառության առանձնահատկությունները բնութագրող կատեգորիալ համակարգի ձևավորմանն ու բովանդակային հստակեցմանը:

**Առանցքային բառեր և բառակապակցություններ**՝ սոցիոմշակութային արժեքներ, անկանխատեսելիություն, անորոշություն, արդիականացում, սպառողական արժեքներ, երկփեղկված աշխարհայացք, փոխակերպում:

Համաշխարհայնացման գործընթացները թափանցելով հասարակական կյանքի տնտեսական, քաղաքական ու սոցիոմշակութային ոլորտներ, վերափոխում են նաև մարդկանց կենսակերպը, ձևավորում են համագործակցության նոր ձևեր ու սոցիոմշակութային նոր արժեքներ: Ժամանակակից մարդը հայտնվում է իր համար նոր իրականության մեջ, որտեղ փոխվել են ինչպես անհատական կեցության, այնպես էլ սոցիալական համակեցության պայմանները: Չնայած այս ամենին «տեղեկատվական հագեցած միջավայրում գտնվող մարդու համար դժվար չէ նկատել, որ «հնի և նորի» հարաբերակցությունը, դրանց հնարավոր հակադրությունը անխուսափելի են: Առանց «հինը» իմաստավորելու, դրա հետ հարաբերակցվելու «նորը» որպես այդպիսին լինելիություն չունի» [4, էջ 48]:

Հասարակության սոցիալական և հոգևոր կյանքի բարդ տեղաշարժերը հանգեցնում են մարդկային կեցության վերափոխման՝ նոր տեխնոլոգիաների, մարդկանց միջև համագործակցության նոր ձևերի, նոր արժեքային նորմատիվ բաղադրիչների վերափոխման: Հասարակությունը մտնում է գործառության մի գոտի, որտեղ անկանխատեսելիությունը և դրանով պայմանավորված վարքի անորոշությունը դառնում է գոյության մշտական ձև, ինչի արդյունքում կյանքի և կենսագործունեության յուրաքանչյուր կողմը վերածվում է խնդրի: Ձևավորվում են սոցիալական նոր ինստիտուտներ և միջանձնային նոր հարաբերություններ: Հասարակության մեջ տեխնածին միջավայրի զարգացման հետևանքով փոխակերպվում են մարդու բնությունը, ֆիզիկական և հոգեկան հատկանիշների ողջ համակարգը: Սպառողական արժեքների ու հոգեբանության անարգել տարածման հետևանքով էապես փոխվում են մարդու ներաշխարհը, արժեքային կողմնորոշիչները:

Քանի որ քաղաքակրթության հիմքում ընկած են մարդու կենսական պահանջմունքները, ապա դրանք էլ խթան են հանդիսանում մարդու կյանքն ավելի ակտիվացնելու համար: Կենսագործունեության այս ձևն ապահովում է ինչպես անհատի, այնպես էլ հասարակության վերարտադրությունը: «Մարդը գնահատվում է

ըստ սոցիալապես օգտակար առարկաներ ստեղծելու, բազմացնելու և բարելավելու իր ընդունակության: Այսպիսով արտադրողականությամբ է որոշվում բնությանը տիրելու և այն վերափոխելու աստիճանը, չկարգավորվող բնական միջավայրի առաջադիմական փոխարինումը կարգավորվող տեխնիկական շրջապատով» [7 էջ 219]:

Հին ու նոր իրողությունների համատեղման այս դժվարին գործընթացը նախադրյալ է ստեղծում երկփեղկված աշխարհայացքի և երկակի սոցիալական դիրքորոշումների ձևավորման համար: Դժվար չէ նկատել, որ սոցիալականությանն առնչվող փոխակերպումները հիմնականում առնչվում է մարդկային համակեցության գոյության, վերարտադրության ու գործառության հիմունքներին, ինչը նշանակում է, որ սոցիալականության նոր պայմանները այս կամ այն չափով անդրադառնում են նաև մարդկային հարաբերությունների բնույթի ու բովանդակության վրա: Մերօրյա իրականությունը անհատին հոգևոր առումով հագեցված և առաքինի գոյության համար խիստ սահմանափակ հնարավորություններ է ստեղծում: Ժամանակակից մարդու հետագա կյանքի հեռանկարը հուսադրող չէ: Սոցիալական համընդհանուր փոխակերպումների գործընթացը հանգեցնում է անձի ճգնաժամի: Եթե դադարում է գոյություն ունենալ «մարդկային գործունեության ընդհանուր հայեցակարգը» կարգավորող իրականության կառուցվածքը, ապա որպես ժամանակակից հասարակության գլխավոր սկզբունք կարող է հանդես գալ «բացարձակ ինքնուրույնությունը», որը հետագայում կարող է դառնալ «բռնորի դեմ անողորպատերազմի» պատճառ: Մշտապես առկա այս սպառնալիքը կարող է չեզոքացվել կարգը ձևավորող և պահպանող տարբեր (ինստիտուցիոնալ, հոգևոր և այլն) միջոցներով: Որոշակի ժամանակահատվածում տնտեսական, քաղաքական, մշակութային փոփոխությունները համապատասխան փոփոխություններ են առաջացնում նաև մարդկանց գիտակցության մեջ:

Ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող նշանակալից փոփոխությունների հետևանքով խախտվում է հասարակության կայունությունը: Առօրյա կյանքում մշակույթի և բնության ոլորտներին ենթարկվող մարդու ապագան մնում է անհայտ, և նա մասամբ ապրում է կուրորեն՝ չիմանալով, թե ինչ կարող է

պատահել իրեն վաղը: Նա անօգնական է բոլոր այն հանկարծակի ու չկանխատեսված իրադրությունների առջև, որոնք կարող են փոխել նրա հեռանկարային ծրագրերը, այս պատճառով իր առօրյա կյանքը փորձում է դարձնել հնարավորինս կանխատեսելի ու համակարգված: Առօրյայի կանխատեսելիությունն ու ակնհայտությունն ուղղակիորեն անհրաժեշտ են մարդուն այս աշխարհում գոյատևելու, թեկուզև իրականության և փորձի այլ ոլորտներում ստեղծագործելու, արարելու, նորույթներ ու հայտնագործություններ անելու համար, քանզի առօրյան իրականության այն ոլորտն է, որը մարդուն կապում է այլ իրականությունների հետ՝ մնալով դրանց միջև: Ինչքան էլ մարդը փորձի հեռանալ առօրյա իրականությունից, միննույն է, որոշակի պահի նա վերադառնում է այնտեղ:

Երբևէ որևէ արդիականացում միանգամայն հարթ ու սահուն չի ընթացել: Հասարակության մեջ բոլոր նշանակալի փոխկերպումների առանձնահատկությունն այն է, որ դրանք ընթանում են ցավոտ, սոցիալ-հոգեբանական լարված մթնոլորտում: «Ժամանակակից աշխարհում ժողովուրդների, երկրների, ամբողջ մարդկության կյանքում կատարված փոփոխությունների բնույթը անհնարին է ըմբռնել, առանց անդրադառնալու ժամանակակից աշխարհին բնորոշ «ավանդական-ազատական գերքաղաքակրթություն» երկակի հակադրությանը: Բոլոր կարևորագույն գործընթացները պետք է իմաստավորվեն այս հակադրության տեսանկյունից» [3, էջ 114]: Ցանկացած սոցիոմշակույթ բաղկացած է պահպանողական և ստեղծագործական (կրեատիվ) բաղադրիչներից, որոնցից կրեատիվ բաղադրիչը պայմանավորում է մշակույթի նորամուծությունները գեներացնելու, ըստ էության՝ դրանց վերարտադրումը կազմակերպելու կարողությունը:

Քաղաքակրթության շարունակական զարգացմանը գուզընթաց ձևավորվում է մարդկային գոյության արհեստական մի նոր աշխարհ, որի ազդեցությամբ փոխվում են մարդու մտածողությունն ու հոգեբանությունը, արժեքային կողմնորոշումներն ու միջանձնային հարաբերությունները: Մարդն օտարվում է իր անմիջական աշխարհից:

Պատմական շատ շրջափուլերի ընթացքում պահպանվում և վերարտադրվում են միայն այն կարծրատիպերը, որոնք համապատասխանում են ժամանակակից կյանքի պայմաններին: Հայ հասարակության օրինակով, սոցիոլոգ Գ.Պողոսյանը նշում է.

«արդիականացման հետընթացը՝ տնտեսության որոշ ոլորտների ապարդյունաբերականացումը և արխաիկացումը, սոցիալական բևեռացումն ու սոցիալական կառուցվածքի որակական վատթարացումը, բնակչության ծայրաստիճան աղքատացումը, աճող արտագաղթը և սոցիալ-մարզինալ շերտերի ավելացումը, իրենից ներկայացնում են հետխորհրդային զարգացումների համար բնորոշ և օրինաչափ փուլ: Արդիականացման դասական արևմտյան մոդելների կիրառումը հետխորհրդային հասարակություններում անխուսափելիորեն հանգեցրեց դրանց սոցիալական կառուցաքանդմանը: Խնդիրն այն է, որ մեզանում չմշակվեցին սեփական էթնոմշակութային մոդելներ» [2, էջ 78]:

Ստացվում է այնպես, որ վարքային նորամուծությունների ընտրասերմամբ իրականացվում է սոցիոմշակութայի արժեքների արդիականացումը: «Իրավիճակը հարուցում է մարդու սոցիալական դիրքորոշումների անորոշություն, նրա դրության երկակիության, որը մի կողմից, կարող է կյանքի կոչել կարոտախտ՝ ձգտումներ, իղձեր և դրանք իրականացնելու անհնարինություն, իսկ մյուս կողմից՝ չհիմնավորված, գերաճած սպասումներ, որոնք հակասում են մարդկանց ռեալ հնարավորություններին և ռեալ իրադրությանը» [1, էջ 186]: Արդիականացումը, այսպիսով, ինքնառաջադիմող գործընթաց չէ, մեծամասամբ դա զարգացած երկրների նվաճումները սեփական երկիր տեղափոխելու փորձ է: Բացի այդ, արդիականացման հարացույցը որոշվում է մրցակցությամբ, նրա ներուժով, հետևաբար արդիականացման առարկան ոչ միայն զարգացման մոդելներ են, այլև արժեքային կողմնորոշումները:

Եթե ավանդական հասարակության մեջ շեշտը դրվում է գործելու եղանակի, միջոցների, ռեսուրսների վրա, որտեղ առաջնորդվում են բոլորի նման ապրելու և բոլորից չտարբերվելու սկզբունքով, ապա ժամանակակից հասարակության մեջ շեշտը դրվում է գործունեության նպատակի արդյունքների վրա, կարևորվում է գործարարության սկզբունքը: Ազատ մարդու գործունեությունը և նպատակի վերջնական արդյունքը որոշվում են շուկայում ունեցած նրա հաջողությամբ կամ անհաջողությամբ: Այդ պատճառով էլ հիմնական սկզբունքը դառնում է առաջարկն ու պահանջարկը: Նյութականն ավելի է կարևորվում քան հոգևորը: Ամեն ինչ դառնում է գործնական ու շահադիտական, մարդիկ դառնում են անտարբեր: Մարդու արժեքը

որոշվում է ոչ թե՛ հոգևոր, բարոյական կամ ինտելեկտուալ հատկանիշներով, այլ փողով: Հոգևոր արժեքներն աստիճանաբար կերպարանափոխվում են և դառնում ապրանքների խորհրդանիշային պատկեր: Մարդը սկսում է իր վարքագիծը կառուցել՝ ելնելով հասարակության շահերի նկատմամբ իր շահերի գերակայությունից, ինչը խթանում է ծայրահեղ անհատապաշտության անարգել տարածմանը:

Քաղաքակրթությունը աստիճանաբար մոտենում է գայթակղություններով լեցուն, սակայն խիստ վտանգավոր մի սահմանագծի, որից անդին չվերահսկվող ուժերի ազդեցությունը կարող է ճակատագրական լինել մարդու համար:

Արժեքները հանդես են գալիս որպես սոցիալական կենսափորձի ընտրության, փորձարկման և կուտակման սոցիոմշակութային համակարգ: Ընտրողական ամրագրման միջոցով արժեքները օրինականացնում և գործողության մեջ են դնում մարդկային կենսափորձի այն տարրերը, որոնք նպաստում են սոցիալական համակարգի ներքին կազմակերպմանն ու կայուն զարգացմանը: Այդ տեսակետից արժեքները ժառանգորդման այն կարևորագույն սոցիոմշակութային բաղադրիչներն են, որոնք ապահովում են սոցիալական համակարգի գործառությունը:

Սոցիալական նոր իրականությունում չկա նորմերի ու արժեքների միասնական և կայուն համակարգ: Երկար տարիներ մարդկանց մտածողությունն ու վարքը կարգավորող հին, ստուգված արժեքներն ու նորմերը բախվում են նոր ու անձանոթ արժեքներին: Պատահական չէ, որ արմատական փոխակերպումների փուլում դեռևս անցյալի արժեքներով, բայց ներկայի պահանջներով ապրող մարդու սոցիոմշակութային կարգավիճակների միջև ներանձնային պայքար է ընթանում: Հակասություն է ծագում նաև հասարակական հին ու նոր արժեքների միջև, որը, կախված հանգամանքներից ու պայմաններից, կարող է վերաճել նաև բախման՝ ծնունդ տալով սոցիալական անումիայի, որի ախտանիշներից են անորոշությունը, տագնապը, վախը:

Վերափոխվող հասարակության յուրաքանչյուր տիպ մշակում է իր սոցիոմշակութային հիմունքները, որոնց ամենահուսալի չափանիշը էթնոմշակութային ժառանգության և քաղաքակրթական հիմնարար արժեքների հավասարակշռությունն է:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հարությունյան Մ. Ա., Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փրկիսփայությունը, Եր., «Նաիրի», 2014, 244 էջ :
2. Պողոսյան Գ. Ա., Արդի հայ հասարակությունը 21-րդ դարակզրին: Եր., «Լուսարաց», 2006, էջ 354:
3. Гавров С., Социокультурная традиция и модернизация российского общества. М., МГУКИ, 2002, с.146.
4. Захарченко М.В. Христианство: духовная традиция в истории и культуре.СПб.,2001, с.68.
5. Ирхин Ю.В., К вопросу о кросскультурных исследованиях: Восток-Запад//Социологические исследования. 2005, №2, с.131-135.
6. Кастельс М. Информационная эпоха: экономика, общество и культура, //http://polbu.ru/kastels\_informepoch/
7. Маркузе Г., Эрос и цивилизация. Одномерный человек. Исследование идеологии развитого индустриального общества, М., «АСТ», 2003, с. 319.
8. Рене Генон. Царство количества и знамения времени. М., 2011, с.158.
9. Хабермас Ю, Концепции модерна. Ретроспектива двух традиций. Политические работы. М., «Праксис», 1995, с. 368.
10. Швыров В.С., Рациональность как ценность культуры.Традиция и современность. М., 2003, с.176.

## НОВАЯ СОЦИАЛЬНАЯ РЕАЛЬНОСТЬ И СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКАЯ ТРАНСФОРМАЦИЯ ЦЕННОСТЕЙ

Алавердян Н.А.(ЕГУ,Ереван, Армения)

В настоящее время, мир трансформируется, новая интерпретация социокультурной функции ценностей в построении и регулировании общественной жизни, социокультурные принципы сосуществования, передача жизненного опыта и формирование национальной идентичности приобрели новое теоретическое обоснование и практическое значение. Социальная жизнь, с одной стороны, характеризуется стабильными системами ценностей, норм, традиций и идей, которые регулируют отношения, которые позволяют обществу сохранять свои качественные особенности, а с другой стороны, для нее характерны постоянные изменения и обновления.

Социальные системы существуют благодаря новым социокультурным ценностям, которые обеспечивают существование общества и его развитие. Сложный процесс смещения старых и новых реалий создает предпосылки для формирования дихотомического мировоззрения и двойных социальных позиций.

В разные исторические периоды социальные системы выживают, потому что благодаря определенным механизмам они дополняются новыми социокультурными ценностями.

Современное общество становится все более плюралистическим и альтернативным и создает такую морально-психологическую атмосферу, когда человек не только ощущает культурную неполноценность, но и становится более приспособленным к новым взглядам и образу жизни.

Старые, проверенные ценности и нормы, регулирующие мысли и поведение людей, вступают в противоречие с новым, неизвестными ценностями. В этом процессе, с одной стороны, консервативность обеспечивает стабильность в обществе, а с другой стороны современность принимает новые ценности и стремится к мобильности и инновациям. В таких условиях радикальных преобразований ценности выполняют важную функцию преодоления социокультурных кризисов, адаптации к новым условиям, уменьшения борьбы между старым и новым.

С этой точки зрения ценности-это не только стабильная и надежная основа для общества, но и для его обновления и модернизации.

**Ключевые слова и словосочетания:** социокультурные ценности, непредсказуемость, неопределенность, модернизация, потребительские ценности, дихотомическое мировоззрение, трансформация.

## THE NEW SOCIAL REALITY AND SOCIO-PSYCHOLOGICAL TRANSFORMATIONS OF VALUES

*Alaverdyan N.A. (YSU, Yerevan, Armenia)*

At present, when the world is in transformation, a fresh interpretation of social-cultural function of values in construction and regulation of social life, social-cultural principles of coexistence, transferring of life-experience and formation of national identity have acquired a new theoretical and practical significance. Social life on the one hand is characterized by stable systems of values, norms, traditions and ideas that regulate relations, which enable the society to maintain its qualitative specificities, and on the other hand, it is characterized by continuous change and renewal.

Social systems exist thanks to new sociocultural values, which provide the existence of the society and its development. The difficult process of combining old and new realities creates a precondition for the formation of a dichotomous worldview and dual social positions.

During various historical periods social systems survive because thanks to certain mechanisms they are supplemented with new sociocultural values.

Modern society becomes more and more pluralistic and alternative and creates such moral-psychological atmosphere, when a person does not only feel cultural inferiority, but also becomes more adaptable to new attitudes and lifestyles.



Old, tested values and norms regulating peoples thoughts and behavior clash with new, unfamiliar values. In this process on the one hand the conservativeness ensures stability within the society, and on the other, modernity adopts new values and aims at mobility and innovation.

Under such conditions of radical transformations values fulfill the important function of overcoming social-cultural crises, adaptation to new conditions, reduction of struggle between the old and the new.

From this point of view, values is not only stable and reliable basis for society, but also for its renewal and modernization.

**Key words and word combinations:** sociocultural values, unpredictability, uncertainty, modernization, consumer values, dichotomous worldview, transformation.

Ալավերդյան Նելլի Ալավերդու, փ.գ.թ., ԵՊՀ, փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի ասիստենտ, E.mail: [nalaverdyan@ysu.am](mailto:nalaverdyan@ysu.am), [հեռ.096884313](tel:096884313), Երևան, Մառի 13-20